ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015Թ.ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Դիլիջան համայնքի 2015թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ունենալով համայնքի 2013-2016թթ. քառամյա զարգացման ծրագիրը:

2015թ. առաջին եռամսյակում հավաքագրվել է 98652,0 հազ.դրամի եկամուտ:Հաշվետու ժամանակաշրջանում եկամուտների հավաքագրումը կազմել է 90,1 տոկոս, սեփական եկամուտների հավաքագրումը՝ 83 տոկոս:

Դիլիջան համայնքում նշված ժամանակահատվածում իրականացվել են սոցիալ-տնտեսական, մշակութային և կրթական մի շարք ծրագրեր:

Սոցիալական ծրագրերի իրականացում

Քաղաքապետարանի ուշադրության կենտրոնում են սոցիալապես անապահով ընտանիքները:455,0 հազ.դրամ գումար է հատկացվել 32 անապահով ընտանիքների դրամական օգնություն տալու նպատակով:

Յուրաքանչյուր նորածին երեխաների համար 42 ընտանիքի տրվել է 760,0 հազ.դրամ միանվագ դրամական օգնություն:

Դիլիջան քաղաքում գործող <Հույսի Կամուրջ> հասարակական կազմակերպություն հաճախող հաշմանդամ երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքները առավել արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու համար համայնքի բյուջեից յուրաքանչյուր ամիս ցուցաբերվում է ֆինանսական աջակցություն: Դիլիջան քաղաքում գործող «Հույսի Կամուրջ» հասարակական կազմակերպություն հաճախող հաշմանդամ երեխաների և նրանց ուղեկցող ծնողների տրանսպորտային ծախսերը հոգալու համար հատկացվել է 503,0հազ.դրամ:

Դիլիջան քաղաքային համայնքի ենթակայության նախադպրոցական հիմնարկությունների թվով 98 աշխատողների տրվել է ֆինանսական աջակցություն հերթական բժշկական ստուգումների անցկացման համար:

Հայրենական մեծ պատերազմի կին մասնակիցներին մարտի 8-ի կապակցությամբ տրամադրվել է դրամական օգնություն:

Մշակութային-կրթական ծրագրերի իրականացում

Համայնքում կազմակերպվել են դպրոցականների հանրապետական մարզական խաղեր նվիրված ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին և պատանիների և աղջիկների շախմատի քաղաքային առաջնություն նվիրված Հայկական բանակի 23-ամյակին:

Դիլիջան քաղաքի զբոսայգին նոր սեզոնին նախապատրաստելու, ինչպես նաև բնակչության ակտիվ հանգիստն առավել հարմարավետ և անվտանգ դարձնելու նպատակով կատարվում է զբոսայգու խաղային ատրակցիոնների նորոգում:

Դիլիջանի <Մարզահամալիր> համայնքային ոչ առևտրային կազմակերպության համար ձեռք է բերվել մարզական հագուստ:

Ավարտվել է <Գեղարվեստի դպրոց> համայնքային ոչ առևտրային կազմակերպության դահլիճի նորոգման աշխատանքները:

Կոմունալ-բնակարանային և քաղաքային ծրագրերի իրականացում

Դիլիջան քաղաքի Շահումյան և Կալինինի փողոցներում իրականացվում է 34 բնակելի շենքերի դռների և պատուհանների փոխման աշխատանքներ:
Հիմնանորոգվում են Շամախյան 1ա, 1բ և 2բ հասցեների շենքերի վերելակները և սրահները:
Դիլիջան քաղաքի Շամախյան թաղամասի տարբեր հատվածներում կատարվել է ավտոտրանսպորտի երթևեկելի մասի խճապատման աշխատանքներ:
Քաղաքի Շամախյան թաղամասում երեկոյան ժամերին բնակիչների անվտանգ երթևեկությունն ապահովելու նպատակով իրականացվել է փողոցային լուսավորության համակարգի համալրման աշխատանքներ:Զգալի աշխատանքներ են իրականացվել լուսավորության, աղբահանության և սանիտարական մաքրման բարելավման համար:

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ